ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հուլիսի 2025 թվականի №___Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի №32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 1-ի «Գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» №32-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկման մեթոդիկայում (այսուհետ՝ Մեթոդիկա) կատարել հետևյալ լրացումները.

1) Մեթոդիկայի 13-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում «4308-ից» բառից հետո լրացնել «(ճշգրտված՝ սույն մեթոդիկայի 14.1-ին կետին համապատասխան հաշվարկված գործակցով)» բառերը, «ընդունված ծախսերի» բառերից հետո՝ «(այդ թվում՝ արագամաշ առարկաների գծով ծախսի)» բառերը, իսկ «մնացած ծախսերը» բառից հետո՝ «(այդ թվում՝ գումարների հավաքագրման ծախսը ճշգրտված՝ սույն մեթոդիկայի 14.3-րդ կետին համապատասխան հաշվարկված գործակցով)» բառերը.

2) Մեթոդիկայի 13-րդ կետի 4-րդ ենթակետում «բացառությամբ» և «որի փաստացի կատարողականի գնահատումը» բառերից հետո լրացնել «Առաջին հնգամյա ժամանակահատվածի համար» բառերը.

3) Մեթոդիկայի 14-րդ կետում «4113-ից» բառից հետո լրացնել «(ճշգրտված՝ սույն մեթոդիկայի 14.2-րդ կետին համապատասխան հաշվարկված գործակցով)» բառերը, «ընդունված ծախսերի» բառերից հետո՝ «(այդ թվում՝ արագամաշ առարկաների գծով ծախսի)» բառերը, իսկ «մնացած ծախսերը» բառից հետո՝ «(այդ թվում՝ գումարների հավաքագրման ծախսը ճշգրտված՝ սույն մեթոդիկայի 14.4-րդ կետին համապատասխան հաշվարկված գործակցով)» բառերը.

4) Մեթոդիկան լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-14.4 կետերով.

«14.1. Սույն մեթոդիկայի 13-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում ամրագրված Գազպրոմի աշխատողների թվաքանակի առավելագույն մեծությունը ճշգրտվում է հետևյալ բանաձևով որոշվող գործակցով.

$$K_{\text{ԲՑ}2025} = \frac{\text{ԲՑ}_{2025}}{(\text{ԲՑ}_{2020}+\text{ԲՑ}_{\text{միջ}}*5)} * \alpha + (1-\alpha), \text{ որտեղ՝}$$

1) **$K_{\text{ԲՑ}2025}$-ը** 2025 թվականի օգոստոսի 1-ից սկսվող հաշվարկային տարվա համար Բաշխման ցանցի երկարության՝ նախատեսվածի համեմատ ավել աճով կամ նվազմամբ պայմանավորված Գազպրոմի աշխատողների թվաքանակի փոփոխությունը հաշվի առնող գործակիցն է,
2) **ԲՑ_{2025}-ը** 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ շահագործման մեջ գտնվող Բաշխման ցանցի փաստացի երկարությունն է,
3) **ԲՑ_{2020}-ը** 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ շահագործման մեջ գտնվող Բաշխման ցանցի փաստացի երկարությունն է,
4) **$\text{ԲՑ}_{\text{միջ}}$-ը** 2011-2020 թվականների ընթացքում շահագործման մեջ գտնվող Բաշխիչ ցանցի երկարության միջին տարեկան փաստացի փոփոխությունն է,
5) **α-ն** աշխատողների թվաքանակի՝ Բաշխիչ ցանցի երկարության փոփոխությունից կախված փոփոխական մասը հաշվի առնող գործակիցն է, որը ընդունվում է 0.6:

14.2. Սույն մեթոդիկայի 14-րդ կետում ամրագրված Գազպրոմի աշխատողների թվաքանակի մեծությունը ճշգրտվում է հետևյալ բանաձևով որոշվող գործակցով.

$$K_{\text{ԲՑ}2030} = \frac{\text{ԲՑ}_{2030}}{(\text{ԲՑ}_{2020}+\text{ԲՑ}_{\text{միջ}}*10)} * \alpha + (1-\alpha), \text{ որտեղ՝}$$

1) **$K_{\text{ԲՑ}2030}$-ը** 2030 թվականի օգոստոսի 1-ից սկսվող հաշվարկային տարիների համար Բաշխման ցանցի երկարության՝ նախատեսվածի համեմատ ավել աճով կամ նվազմամբ պայմանավորված Գազպրոմի աշխատողների թվաքանակի փոփոխությունը հաշվի առնող գործակիցն է,

2) **ԲՑ$_{2030}$-ը** 2030 թվականի հունվարի 1-ի դրությամբ շահագործման մեջ գտնվող Բաշխման ցանցի փաստացի երկարությունն է:

14.3. Սույն մեթոդիկայի 13-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված մնացած ծախսերի առավելագույն մեծության որոշման նպատակով սակագնի հաշվարկներով նախատեսված գումարների հավաքագրման ծախսը ճշգրտվում է հետևյալ բանաձևով որոշվող գործակցով.

$$K_{\text{ԳՀ}2025} = \frac{\text{ՍՊ}_{\text{բն}2024}}{\text{ՍՊ}_{\text{բն}2020}} * \frac{\text{Ս}_{\text{բն}2024}}{\text{Ս}_{\text{բն}2020}}, \text{ որտեղ՝}$$

1) **Կ$_{\text{ԳՀ}2025}$-ը** 2025 թվականի օգոստոսի 1-ից սկսվող հաշվարկային տարվա համար բնակչության սպառման ծավալի և վերջինիս վաճառվող բնական գազի սակագնի աճով կամ նվազմամբ պայմանավորված գումարների հավաքագրման ծախսի փոփոխությունը հաշվի առնող գործակիցն է,

2) **ՍՊ$_{\text{բն}2024}$-ը** 2024 թվականին բնակչության կողմից բնական գազի փաստացի սպառման ծավալն է,

3) **ՍՊ$_{\text{բն}2020}$-ը** Առաջին հնգամյա ժամանակահատվածի առաջին հաշվարկային տարվա սակագնի հաշվարկներում ներառված՝ գումարների հավաքագրման ծախսի որոշման համար հիմք հանդիսացած բնակչության կողմից բնական գազի սպառման ծավալն է,

4) **Ս$_{\text{բն}2024}$-ը** 2024 թվականի փաստացի արդյունքներով բնակչությանը վաճառված բնական գազի սակագնի միջին կշռված մեծությունն է,

5) **Ս$_{\text{բն}2020}$-ը** Առաջին հնգամյա ժամանակահատվածի առաջին հաշվարկային տարվա սակագնի հաշվարկներում ներառված՝ գումարների հավաքագրման ծախսի որոշման համար հիմք հանդիսացած բնակչությանը վաճառվող բնական գազի սակագնի միջին կշռված մեծությունն է:

14.4. Սույն մեթոդիկայի 14-րդ կետում նշված մնացած ծախսերի առավելագույն մեծության որոշման նպատակով սակագնի հաշվարկներով նախատեսված գումարների հավաքագրման ծախսը ճշգրտվում է հետևյալ բանաձևով որոշվող գործակցով.

$$K_{\text{ԳՀ}2030} = \frac{\text{ՍՊ}_{\text{բն}2029}}{\text{ՍՊ}_{\text{բն}2024}} * \frac{\text{Ս}_{\text{բն}2029}}{\text{Ս}_{\text{բն}2024}}, \text{ որտեղ՝}$$

1) **Կ$_{\text{ԳՀ}2030}$-ը** 2030 թվականի օգոստոսի 1-ից սկսվող հաշվարկային տարվա համար բնակչության սպառման ծավալի և վերջինիս վաճառվող բնական գազի սակագնի

աճով կամ նվազմամբ պայմանավորված գումարների հավաքագրման ծախսի փոփոխությունը հաշվի առնող գործակիցն է,

2) **$ՍՊ_{բն2029}$-ը** 2029 թվականին բնակչության կողմից բնական գազի փաստացի սպառման ծավալն է,

3) **$Ս_{բն2029}$-ը** 2029 թվականի փաստացի արդյունքներով բնակչությանը վաճառված բնական գազի սակագնի միջին կշռված մեծությունն է:».

5) Մեթոդիկայի 23-րդ կետում «(ամորտիզացիայի)» բառից հետո լրացնել «՝ հաշվարկված սույն մեթոդիկայի 16-րդ կետով սահմանված 4 տոկոս նորմայով,» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
___ հուլիսի 2025թ.